ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091435136, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

29.11.2016թ.
316-ի 4

ՀՀ պաշտպանության նախարար
պարոն Վիգեն Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1204 – Ն որոշմամբ տեղեկատվության ազատության ոլորտում նոր պարտավորություններ են սահմանվել տեղեկատվություն տնօրինողների համար:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել.

1. Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առանձնացվա՞ծ են արդյոք տեղեկություն ստանալու հարցումները. դրանք գրանցվո՞ւմ են արդյոք քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:
2. Խնդրում ենք տրամադրել Ձեր ղեկավարած գերատեսչության գործող կարգը՝ տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման,ինչպես նաև դրանց վիճակագրության վարման վերաբերյալ:
3. Արդյոք այդ կարգը հրապարակված է գերատեսչության պաշտոնական ինտերնետային կայքում, եթե այո, խնդրում ենք տրամադրել հիպերհղումը:

Խնդրում եմ, պատասխանը տրամադրել էլեկտրոնային եղանակով՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ foi@foi.am:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան